~~«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿ~~

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» 2016 թվականի դեկտեմբերի 15-ի ՀՕ-245-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 12-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

~~«1. Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար սույն օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի՝~~

~~1) 1-ին, 2-րդ, 5-րդ եւ 6-րդ կետերում նշված ֆիզիկական անձինք դրոշմանիշային վճարը վճարում են հետեւյալ դրույքաչափով.~~

~~Մինչեւ 100 000 դրամ հաշվարկման բազայի դեպքում~~	~~1500 դրամ~~
~~100 001-ից մինչեւ 150 000 դրամ հաշվարկման բազայի դեպքում~~	~~2000 դրամ~~
~~150 001-ից մինչեւ 300 000 դրամ հաշվարկման բազայի դեպքում~~	~~3000 դրամ~~
~~300 001-ից մինչեւ 500 000 դրամ հաշվարկման բազայի դեպքում~~	~~5000 դրամ~~
~~500 001-ից մինչեւ 750 000 դրամ հաշվարկման բազայի դեպքում~~	~~7500 դրամ~~
~~750 001-ից մինչեւ 1 500 000 դրամ հաշվարկման բազայի դեպքում~~	~~15000 դրամ~~
~~1 500 001 դրամ եւ ավելի հաշվարկման բազայի դեպքում~~	~~20000 դրամ~~

2) 3-րդ եւ 4-րդ կետերում նշված անհատ ձեռնարկատերերը եւ նոտարները դրոշմանիշային վճարը վճարում են հետեւյալ դրույքաչափով.

Մինչեւ 2 400 000 դրամ հաշվարկման բազայի դեպքում	18 000 դրամ
2 400 001-ից մինչեւ 6 000 000 դրամ հաշվարկման բազայի դեպքում	24 000 դրամ
6 000 001-ից մինչեւ 12 000 000 դրամ հաշվարկման բազայի դեպքում	48 000 դրամ
12 000 001 դրամ եւ ավելի հաշվարկման բազայի դեպքում	120000 դրամ»

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: Սույն օրենքի գործողությունը տարածվում է 2021թվականի հունվարի 1-ից հետո ծագած (ծագող) հարաբերությունների վրա: